



Արձանագրություն

“Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին” ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին” ՀՀ օրենքի նախագծի հանրային քննարկման

29.08.2012թ., ժ. 14.00-16.50

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոն

Օրակարգ

- “Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին”, “Տեղական ինքնակառավարման մասին”, “Բնապահպանական վերահսկողության մասին” ՀՀ օրենքներում, ՀՀ հողային և ջրային օրենսգրքերում փոփոխությունների ներկայացում
- Հարց ու պատասխան

Մասնակիցների ցանկը և առաջարկությունները նախագծի վերաբերյալ կցվում են արձանագրությանը:

Մասնակիցներին ողջունեց Էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոնի տնօրեն **Աիդա Իսկոյանը**՝ նշելով, որ հանդիպման նպատակը նախագծի քննարկումն է, որը կարիք ունի հանրային ներդրումների և առաջարկությունների:

Մասնակիցներին ողջունեց ԲԾԻԳ ՊՀ տնօրեն, օրենքի նախագծի մշակման աշխատանքային խմբի ղեկավար **Վիկտոր Մարտիրոսյանը**: Նա նշեց, որ օրենքը պետք է լինի դինամիկ և հնարավորություն տա զարգացման և ունենա փոփոխման հնարավորություն: Ծրագիրը, որի շրջանակներում կատարվում է օրենքի փոփոխությունը, նոր խնդիր է առաջ քաշում. համայնքային կառավարմամբ ԲՀՊՏ-ների ստեղծում: Շնորհիվ դրա առաջացել է նաև գործող օրենքի վերանայման անհրաժեշտություն: ՀՀ բնապահպանության նախարարի հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ, որտեղ ներառվել են տարբեր շահագրգիռ գերատեսչությունների, կազմակերպությունների ներկայացուցիչներ: ԲՀՊՏ-ների մասին օրենքում կատարվել են մոտ 30-35 փոփոխություններ, չհաշված այլ օրենքներում կատարված փոփոխությունների առաջարկությունները:

Օրենքի նախագիծը ներկայացվում է հանրային քննարկման՝ նպատակ ունենալով հանրության ներդրումը այս օրենքում: Այն քննարկելուց և լրամշակելուց հետո

կներկայացվի ՀՀ ԲՆ, այնուհետև նախարարության կողմից կներկայացվի այլ շահագրգիռ գերատեսչությունների: Նախատեսվում է օրենքի նախագիծը հոկտեմբերին ներկայացնել ՀՀ կառավարություն, իսկ մինչև տարեվերջ՝ ՀՀ Ազգային ժողով:

Վ. Մարտիրոսյանը նշեց, որ բոլոր առաջարկությունները կքննարկվեն, իսկ, որոնք վիճելի են, այնուհետև կքննարկվեն նախագծերի հեղինակների հետ:

Սամվել Բալոյանը ներկայացրեց օրենքի փոփոխության նպատակները՝ վերացնել պահպանվող տարածքների իրավական կարգավորման և կառավարման հետ կապված առկա օրենսդրական բացերը, վերացնել ԲՀՊՏ-ների մասին ՀՀ օրենքի և այլ իրավական ակտերի միջև անհամապատասխանություններն ու հակասությունները, ապահովել տարբեր կատեգորիաների ԲՀՊՏ-ների համապատասխանությունը միջազգային չափանիշներին և ապահովել IUCN կատեգորիաների պահպանվող տարածքների ստեղծումը:

Այնուհետև ներկայացրեց ԲՀՊՏ-ների մասին ՀՀ օրենքում, “Տեղական ինքնակառավարման մասին”, “Բնապահպանական վերահսկողության մասին” ՀՀ օրենքներում, ՀՀ հողային և ջրային օրենսգրքերում կատարված փոփոխությունների առաջարկությունները:

Հարց ու պատասխան և քննարկում

Գոռ Սովսիսյան - Էկոլոգիական իրավունքի գիտատեսու՝մնական կենտրոն

1. Հետաքրքրվեց, թե ովքեր են իրավաբաններից մասնակցել օրենքի նախագծի մշակման աշխատանքներին:

Ս. Բալոյանը ներկայացրեց իրավաբաններին. ԲԾԻԳ ՊՀ իրավաբան **Ալիկ Մաթևոսյան**, ՀՀ ԲՆ իրավաբանական վարչության նախկին պետ **Արթուր Համբարձումյան**, ՀՀ արդարադատության նախարարության իրավական ակտերի փորձաքննության գործակալության պետ **Կարեն Խտրյան**, ՀՀ գյուղատնտեսության նախարարության իրավաբանական վարչության պետ **Կարինե Գրիգորյան**:

Ժաննա Գալյան – Հայաստանի էկոտուրիզմի ասոցիացիայի նախագահ

1. Հոդված 20. Արգելոցի պահպանության ռեժիմը

Խնդրեց մանրամասնել հոդված 20-ում տրված “իրազեկման նպատակով բնապահպանական միջոցառումների կազմակերպումը և իրականացումը”:

2. Հոդված 24. Ազգային պարկի պահպանության ռեժիմը

Խնդրեց հստակեցնել “ջրային ռեժիմը խախտող ցանկացած գործունեություն” արտահայտությունը

3. Հոդված 24-ում հստակեցնել “ընդհանուր օգտագործման ճանապարհներից և ջրային ուղիներից դուրս շարժիչային և թրթուրավոր տրանսպորտային միջոցների երթևեկությունը” տերմինը, նաև հստակեցնել Հայաստանի պայմաններում ջրային ուղիները:

4. Առաջարկեց գիտական հաստատությունների և կրթական հաստատությունների գիտական բաժիններին, որոնք զբաղվում են կենսաբազմազանության ուսումնասիրությամբ, ներկայացնել օրենքը և ստանալ նրանց պաշտոնական եզրակացությունները:

Պատասխան

1. **Ս. Բալոյան** - Գիտելիքների ձեռքբերման, ճանաչողության նպատակով կրթական ծրագրեր՝ հատուկ մշակված երթուղիներով:

2. **Ս. Բալոյան** - Ցանկացած գործունեության դեպքում ջրային հավասարակշռությունը չխախտելը:

3. **Կ. Մանվելյան** - Շարժիչային տրանսպորտն անհրաժեշտ է արգելոցներում, ըստ Մանվելյանի օրենքում կարելի է նշել, որ զբոսաշրջության նպատակով արգելվում է շարժիչային տրանսպորտի օգտագործումը, իսկ կառավարման առումով թույլատրվում է:

Ի լրումն, **Ս. Բալոյան** և **Ս. Գալստյան** առաջարկեց **Ժ. Գալստյանին** ստույգ ձևակերպումներով գրավոր ներկայացնել առաջարկությունները:

4. **Կ. Մանվելյան** - Միջազգային պրակտիկայում նույնպես ընդունված է տուրիզմը արգելոցներում: Խնդիրը ճիշտ երթուղիներ մշակելն է՝ տարածքի կենսաբազմազանությանը չվնասելու համար: Այդ առումով կարելի է ներգրավել այդ կազմակերպություններին: Իսկ ինչ վերաբերվում է տուրիզմին, ապա միանշանակ արգելոցներում տուրիզմ պետք է լինի: Եթե արգելոցը փակվի և այցելու չունենա, հնարավոր չի լինի իմանալ, թե ինչ է այնտեղ կատարվում: Օրինակ բերեց, որ երեք տարվա ընթացքում տուրիստների հոսքի պարագայում տարածքում վերացել է որսագողությունը: Արգելոցները ի տարբերություն այլ ՊՏ-ների չունեն այլ եկամուտի աղբյուր: Սա նաև անձնակազմի համար սոցիալական հարցի լուծում է:

Արսեն Գասպարյան – Երիտասարդ կենսաբանների ասոցիացիայի նախագահ

1. Անհասկանալի է օրենքի «Նպատակը»-ի փոփոխությունը, առաջարկեց թողնել այնպես ինչպես գործող օրենքում է:

2. Հոդված 24. Ազգային պարկի պահպանության ռեժիմը

Ազգային պարկի կայուն օգտագործման գոտու տարածքում արգելվում է ընդերքի շահագործումը բաց եղանակով և պայթեցման միջոցով. արդյո՞ք սա չի նշանակում, որ փակ եղանակով թույլատրվում է:

Առաջարկվեց ընդհանրապես արգելել ընդերքի օգտագործումը և բացառել երկրաբանական հետազոտությունները: Առաջարկվեց գրել բացառությամբ ջրային ռեսուրսների:

3. Հոդված 41. Բնության հատուկ պահպանվող տարածքի պահպանման գոտին

Որն է պահպանման գոտու օրենքում ամրագրելու անհրաժեշտությունը:

Առաջարկվեց բոլոր պահպանման գոտիների քարտեզագրում, կոորդինատների հստակեցում, մակերեսների մասին հստակ պատկերացում ունենալ, հստակեցնել նաև պահպանման գոտու ազդեցության սահմանները և հստակեցնել թե ինչ չափանիշներով է

հաստատվում պահպանման գոտին: Ավելացնել նաև պահպանման գոտում հանքարդյունաբերությունը արգելող կետ:

4. **Հոդված 31. Արգելավայրի պահպանության ռեժիմը**

Առաջարկեց արգելավայրի տարածքում արգելվող գործունեության թվարկվածների մեջ ավելացնել նաև արգելվում է որսորդությունը և ձկնորսությունը:

5. Առաջարկեց նաև արգելել պահպանման գոտում հանքարդյունաբերության գործունեությունը:

Պատասխան

1. **Ս. Բալոյան** - Գործող օրենքում նպատակի վերաբերյալ հոդված գոյություն չունի: Դա օրենքի մուտքն է, որը հակասում է “Իրավական ակտերի մասին” ՀՀ օրենքին, ըստ որի մուտքը միայն պետք է նշի նպատակը և որևիցե իրավական ակտ չպարունակի:

2. **Ս. Բալոյան** - Խոսքը վերաբերվում է միայն ԱՊ-ի կայուն օգտագործման գոտուն: Օրենքի ձևակերպումը չի նշանակում, որ թույլատրվում է ընդերքի օգտագործումը փակ եղանակով: Առաջարկվեց կոնկրետ ձևակերպում ներկայացնել:

3. **Կ. Մանվելյան** - Պահպանման գոտի մինչ այժմ չկար: Պահպանման գոտին մեղմում է ազդեցությունը ՊՏ-ի վրա և պետք է մտնի ՊՏ-ի մեջ: Պահպանման գոտու մեջ կարող են մտնել այն համայնքները, որոնք գտնվում են հարակից տարածքներում: Պահպանման գոտին քարտեզագրվում է պահպանվող տարածքի հետ միասին: Օրենքում տրվում է ՊԳ-ի սահմանագծման սկզբունքը:

4. **Կ. Մանվելյան** - Հողերի մեծ մասը համայնքային են և համայնքները պետք է օգտվեն այդ պաշարներից/արածեցում, բույսերի հավաք: Կարելի է օրենքում նշել, որ արգելվում է որսորդությունը: Առաջարկվեց ներկայացնել հստակ ձևակերպում:

5. **Արամ Ադասյան** - Պահպանման գոտում հնարավոր չէ արգելել, քանի որ այն սեփականատիրոջ է պատկանում, այլ կարելի է միայն սահմանափակել գործունեությունը:

Ռուբեն Խաչատրյան – FPWC տնօրեն

1. Պահպանման գոտու վերաբերյալ համայնքների անհամաձայնության դեպքում ինչպես եք տեսնում լուծումը:

2. Ինչու այս օրենքի նախագծում չի նախատեսվում մասնավոր ՊՏ-ների ստեղծում:

Պատասխան

1. **Կ. Մանվելյան** Եթե սեփականատերը չի համաձայնվում պայմանագիր կնքել և կիրառել ՊԳ-ու սահմանափակումները, ապա այն մնում է որպես անկլավ: Այլ տարբերակ է, եթե պետությունը այն համարի գերակա շահ:

2. **Արմեն Գևորգյան** - Մեծ երկրներում, որտեղ ՊՏ-ները Հայաստանի տարածքից մեծ են, որտեղ կա ռեսուրսների առատություն, դա հնարավոր է: Հայաստանի նման փոքր երկրում մասնավոր ՊՏ-ների ստեղծումը վտանգավոր է: Օրինակ բերեց Վրաստանի փորձը՝ համարելով այն կիսաադետալի:

Գոռ Մովսիսյան - Էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոն

Արդյոք Հայաստանում կան մասնավոր ՊՏ-ներ: Նշեց, որ համաձայն չէ մասնավորի դեպքում վտանգին՝ նշելով, որ վատ կառավարում դեռևս չի նշանակում, որ չի կարող լինել մասնավոր սեփականություն:

Պատասխան

Կ. Մանվելյան - Հարցը քննարկվել է. մտավախություն կա, որ մասնավորի դեպքում արգելավայրերը կարող են տրվել մասնավորի: Օրենքի նախագիծը թույլ է տալիս ոչ միայն ստեղծել ՊՏ և կառավարել, այլև տալ որևէ կազմակերպության կառավարման:

Ա. Աղասյան - Գործող օրենքում նախատեսվել էր հավատարմագրային կառավարում և մշակվել էր օգտագործման կարգը: Սակայն հենց այդ մտավախությունն էր պատճառը, որ գործող օրենքում նույնիսկ հավատարմագրային կառավարումը տեղ չգտավ:

Գրիգոր Զանոյան – FPWC

Հոդված 3. Սույն օրենքում օգտագործվող հասկացությունները
կետ 1 – Բնական օբյեկտն արդյոք ներառում է կոնկրետ առանձնյակներ, թե առանձին միավորներ են:

Պատասխան

Ա. Գևորգյան Բնական օբյեկտ ասելով օրենքում նկատի է առնվում առանձին միավորները:

Էրիկ Գրիգորյան – Երիտասարդ բնապահպան իրավաբանների և տնտեսագետների ասոցիացիայի նախագահ

Ողջունեց օրենքի վերանայման գաղափարը՝ նշելով, որ այն կենդանի օրգանիզմ է և կարիք ունի փոփոխության:

1. Ըստ նրա առաջին հայացքից երևում է, որ նախագիծը մշակելով ՄԱԶԾ ծրագրի շրջանակներում, խումբը փորձել է օրենքի կատեգորիաները համապատասխանեցնել IUCN կատեգորիաներին: Հետաքրքրվեց, թե բովանդակային առումով արդյոք օրենքի փոփոխությունը կբերի ՊՏ-ի ավելի լավ կառավարման՝ միաժամանակ պատասխանելով, որ նայելով արգելոցների թույլատրելի գործողություններին՝ կարելի է հասկանալ, որ այնտեղ ամեն ինչ թույլատրվում է/օր. Իրազեկության նպատակով արգելոց այցելելը/ Առաջարկեց հստակեցնել նշված հոդվածում և ընդհանրապես օրենքում այն կետերը, որոնք տարբերություն տեղիք են տալիս և ռիսկային տարրեր են պարունակում: Առաջարկեց ՊՏ-ներում, որտեղ հնարավոր է սահմանափակել գործունեությունը, փորձել անել դա՝ այն ավելի լավ կառավարելու ու պահպանելու նպատակով: Նույնպես առաջարկեց արգելավայրերում արգելել որսորդությունը:

Նշեց, որ չնայած ողջունելի է, որ փորձ է արվում օրենքը համապատասխանեցնել միջազգային տենդենցներին, սակայն ըստ Գրիգորյանի այն դեռևս միջանկյալ փուլում է և դեռ կարիք կունենա փոփոխությունների:

2. Հոդված 23. Ազգային պարկի գոտիավորումը

կետ 3. Ազգային պարկի կառավարման մարմինների և այլ սեփականատերերի միջև կնքված պայմանագրերի հիման վրա կարող է սահմանվել ազգային պարկի արտաքին պահպանման գոտի:

Ըստ Գրիգորյանի նշված կետը զուտ ցանկություն է թվում, քանի որ մեծապես կախված է սեփականատիրոջ ցանկությունից:

Պատասխան

1. Կ. Մանվելյան - Առաջարկն ընդունվել է արգելավայրերում որսն արգելելու վերաբերյալ:

2. Ս. Բալոյան - Իրավական կենտրոնի կողմից ստացվել է առաջարկ Պահպանման գոտիները պետության կողմից ստեղծելու վերաբերյալ: Առաջարկը հավանության է արժանացել և համապատասխան ձևով կձևակերպվի օրենքում:

Ա. Գևորգյան - Նշեց, որ օրենքում, որտեղ կա օրենք - սուբյեկտ իրավահարաբերություն, օրենքի շրջանակներից դուրս է: Օրենքի նախագիծը մշակողները փորձել են պահպանման գոտի սահմանելով նվազեցնել բացասական ազդեցությունները: Խիստ սահմանափակումներ դնելով կարող ենք խնդիրներ ունենալ սեփականատիրոջ իրավունքի հետ: Դա ավելի լայն օրենսդրական փոփոխությունների խնդիր է: Օրենքի շրջանակներում միայն հնարավոր է պայմանագիր կքել սեփականատիրոջ հետ, եթե համաձայն է, համապատասխան ռեժիմ կկիրառվի, եթե համաձայն չէ, ապա դա նրա իրավունքն է: Իսկ այն տարածքները, որոնք խիստ անհրաժեշտ են, պետք է համարել հանրային շահ և մտցնել արգելոցի տարածքի մեջ:

Ս. Բալոյան - Եթե առաջնորդվենք հանրային շահով, այդ դեպքում կառաջանա հողի կատեգորիայի փոփոխության անհրաժեշտություն, քանի որ սեփականության ձևն է փոխվում:

Էվելինա Ղուկասյան – Ձկնաբանության և հիդրոէկոլոգիայի ինստիտուտի վարիչ

1. Նշեց, որ անճշտություններ կան ձևակերպումների մեջ, այդ թվում նաև գործող օրենքի մեջ: Առաջարկեց խուսափել թվարկումներից որևէ տարր բաց չթողնելու համար:

2. Հոդված 12. Լիազոր մարմնի իրավասությունները

9 կետ. բնության հատուկ պահպանվող տարածքներում կենսաբանական պաշարների օգտագործման ենթակա թույլատրելի չափաքանակների սահմանումը:

Ըստ **Է. Ղուկասյանի** փորձը ցույց է տալիս, որ ոչ մի գիտական հիմնավորում հիմք չի ծառայել դրանց սահմանման համար: Առաջարկեց ավելացնել “ելնելով գիտական հիմնավորումներից” արտահայտությունը:

3. Հոդված 15. Բնության հատուկ պահպանվող տարածքներում իրականացվող գիտական ուսումնասիրությունը

Առաջարկեց ավելացնել 4-րդ կետ. “Գիտական մոնիտորինգի համար անհրաժեշտ կենդանիների որս և բույսերի հավաք”, քանի որ գիտական ուսումնասիրությունների և մոնիտորինգի համար գիտական որսը և հավաքը պարտադիր է:

4. Նշեց, որ կողմ է արգելոցի տարածքում այցելուների կենտրոնի հանման կամ այն արգելոցի սահմանին տեղադրելու գաղափարին:

5. Դեմ է արգելոցի տարածքում աշակերտների մուտքին, քանի որ կարող են վնասել հազվագյուտ բույսերը և միջատները:

Պատասխան

2. **Ս. Բալոյան** - Այդ կետը նշված է գիտական ուսումնասիրությունների մեջ:

4. **Ս. Բալոյան** - Հիմնավորել այցելուների կենտրոնի հանման գաղափարը: Իսկ ինչ վերաբերվում է դիրքին, ապա այն գտնվում է հենց սահմանին, այլ ոչ թե արգելոցի տարածքում:

Այսեր Ղազարյան – GIZ SMB

Ողջունեց կատարված աշխատանքը:

1. Առաջարկեց, հիմք ընդունելով իրավական ակտերի մասին ՀՀ օրենքը, Օրենքի նախագիծը համարել նոր օրենք, այլ ոչ թե գործող օրենքի փոփոխություն, քանի որ այնտեղ առկա են հոդվածների փոփոխություններ:

2. Նախագծի հիմնական հասկացություններում կան հասկացություններ, որոնք կրկնվում են և իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի համաձայն դրանք անհրաժեշտ է հանել նախագծից:

3. Հոդված 6-և 7. - Միջազգային համապատասխան չափանիշներով նշվում է, որ գոտիավորումը կառավարման առանցքային գործիք է և պետք է մնա օրենքում: Կառավարման պլանի մասով գործող օրենքում ավելի լայն բացատրություն է տրված և պետք է հաշվի առնել այն նոր օրենքում:

4. Օրենքում դրական է կենսոլորտի գոտու մասով բացվածքը:

5. Անտառային խնամքի և սանիտարական հատումները բնապահպանության հետ կապ չունեն, քանի որ դրանք անտառտնտեսական գործունեություն են, որոնց նպատակն է ստեղծել բնափայտ:

Պատասխան

Ա. Ղազարյանին առաջարկվեց գրավոր ձևով ներկայացնել առաջարկությունները:

Տիգրան Օգանեզով – REC-Caucasus փորձագետ

1. Գործող օրենքում նշվում է տեղական, հանրապետական և միջազգային նշանակության հողերի մասին: Խնդրեց պարզաբանել օրենքի նախագծում այդ դասակարգումից հրաժարվելու հանգամանքը:

2. Բնության հուշարձանների համայնքային հողերում լինելու մասին: Որքանով է օրենքի նախագիծը նախատեսում, առանց հաշվի առնելու միջազգային և հանրապետական նշանակության բնության հուշարձանները, դրանց հողը դարձնելու համայնքային սեփականություն:

Պատասխան

1. **Կ. Մանվելյան** - Միջազգային պահպանվող տարածք հասկացություն չկա: Տեղական նշանակության ՊՏ-ներ կան մեծ երկրներում, իսկ Հայաստանի նման փոքր երկրում դրա առկայությունն իմաստ չունի:

2. **Կ. Մանվելյան** - Ինչ վերաբերվում է համայնքային կառավարմամբ բնության հուշարձաններին, ապա դա ստեղծում է պետությունը և հնարավորություն տալիս համայնքին այն կառավարելու, որը եկամուտի աղբյուր է տվյալ համայնքի համար: Այնուամենայնիվ բնության հուշարձանը մնում է պետական սեփականություն, պարզապես տրվում է համայնքին՝ կառավարման պայմանագրով:

Հռիփսիմե Բաբայան - ՀՀ տարածքային կառավարման նախարարություն

Ողջունեց կատարված աշխատանքը:

1. Հոդված 13. Տարածքային կառավարման մարմինների իրավասությունները. Նախագահի 728 հրամանագրի մեջ առկա է մարզերում պետական ծառայության մասին կետ, որտեղ մարզպետին տրված է բնապահպանական վերահսկողության գործառույթ: Առաջարկեց կատարել համապատասխան փոփոխություն կամ օրենքի նախագծում, կամ 728 հրամանագրի մեջ փոփոխության կատարելու առաջարկ ներակայացնել:

2. Հոդված 7. Բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարումը 3-րդ կետ - ՏԻՄ-երի մասին օրենքում չկա փոփոխություն պատվիրակված լիազորությունների մեջ՝ կապված ֆինանսավորման հետ:

3. Հոդված 9. Բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման ծախսերը Կա մոտեցումների տարբերություն: Առաջարկեց. եթե ֆինանսական պարտավորություն է առաջացնում, մտցնել կամավոր լիազորությունների մեջ:

Պատասխան

Հ. Բաբայանին առաջարկվեց գրավոր ձևով ներկայացնել առաջարկությունները, որից հետո նրանք կքննարկվեն:

Արման Վերմիշյան - CNF

1. Նախկինում արհեստական ծագում ունեցող, այժմ էկոլոգիական նշանակություն ունեցող օբյեկտին կարելի է կարգավիճակ տալ:

2. Առաջարկեց կառավարման պլանները գոյություն ունեցող 5-ի փոխարեն դարձնել 7 տարի:

3. Արդյոք չի լինի միջադեպ, երբ օր. Ազգային պարկից մի հատված առանձնացվի և կարգավիճակն իջեցվի:

4. Համազգեստի հետ կապված՝ առաջարկեց կառավարության կողմից հաստատվելու փոխարեն հաստատվի Լիազոր մարմնի կողմից:

5. Կա արդյոք ազգային պարկում գտնվող տարածքների հստակ սահմանների նորմ, թե քանի տոկոսը ինչ կատեգորիայի պետք է լինի:

6. Հնարավոր է սանիտարական հատումների սարքավումների օգտագործման համար սահմանել կարգ: Ըստ նրա սահմանափակումները պետք է օրենքով սահմանվեն:

Պատասխան

1. **Կ. Մանվելյան** - Բնական լանդշաֆտը փակում է այդ հարցը:

2. **Կ. Մանվելյան** - Սկզբունքային հարց չէ: Միջազգայնորեն նույնպես 5 տարի է ընդունված: Այն հնարավոր է տարին մեկ անգամ վերանայել:

3. **Վ. Մարտիրոսյան** – Կարգավիճակն իջեցնելը կառավարության մակարդակով լուծվող խնդիր է: Սակայն կարգավիճակն իջեցնելու որոշումը կայացնելու պրոցեսը պետք է բարդացվի: Այսպիսով՝ կարգավիճակն իջեցնելը կարող է լինել միայն պետության մենաշնորհը, իսկ բարձրացնելու առաջարկը կարող է տալ ցանկացած շահագրգիռ կողմ:

4. **Վ. Մարտիրոսյան** - Համազգեստ հաստատումը միայն կառավարության լիազորությունն է:

5. **Ա. Գևորգյան** – Որևէ պարտադրող նորմ գոյություն չունի:

6. **Ա. Գևորգյան** - Նախագծում կթվարկվեն բոլոր հնարավոր արգելվող դեպքերը:

Վլադիմիր Մարոյան – *Լեռնագնացության ֆեդերացիա*

Ելույթ ունենալով անդրադարձավ զբոսաշրջիկների այցելություններին ՊՏ-ներ՝ նշելով, որ դրանից պետք չէ վախենալ, քանի որ նրանք պատրաստված են և զգուշորեն են վերաբերվում ՊՏ-ներին: Անհրաժեշտ է մշակել հստակ երթուղիներ և պլանավորել զբոսաշրջիկների հետ աշխատանքը:

Հերմինե Պողոսյան - *ՄՇ Գյուղատնտեսության և բնապահպանության հանձնաժողով*

Համաձայնվելով **Ա. Ղազարյանի** հետ, նշեց, որ քննարկվող ԲՀՊՏ օրենքի նախագիծը մայր օրենք է, ոչ թե օրենքի փոփոխություն: **Հ. Պողոսյանը** անդրադարձավ նաև կենսոլորտային արգելոցի և օրենքում օգտագործվող մի շարք հասկացություններին:

Հանդիպման ամփոփում

Ա. Գևորգյան - Նշեց, որ օրենքի նախագծի մշակման աշխատանքներում եղել են տարբեր դիրքորոշումներ, սակայն խումբը եկել է կոմպրոմիսի: Բացի IUCN-ին համապատասխանեցնելը խումբը փորձել է կատեգորիա չունեցող տարածքների վրա կիրառել համապատասխան բնապահպանական ռեժիմ՝ սրանով ուժեղացնելով օրենքը: Հստակ ձևակերպված գրավոր առաջարկները կքննարկվեն և կգնահատվեն խմբի կողմից:

Կ. Մանվելյան - Օրենքի վրա խումբն աշխատել է մեկ տարուց ավելի, եղել է ստեղծագործական արդյունավետ աշխատանք: Անհրաժեշտ է մեկ քայլ առաջ նայել, իսկ օրենքի նախագիծն այդ առումով երկու քայլ առաջ է:

Կարեն Ճենտերեճյան - Մեծ աշխատանք է կատարվել օրենքի վրա, դրա մասին են վկայում կարևոր հարցադրումները: Առաջարկները և բարձրացված խնդիրները շատ կարևոր են: Մասնակիցներին խնդրեց առաջարկները ներկայացնել գրավոր ձևով՝ դրանք քննարկելու համար: Շնորհակալություն հայտնեց կոնստրուկտիվ քննարկման համար:

Ս. Բալոյան - Կարևոր համարեց հանրային լսումները որոշումների կայացման սկզբնական փուլում: Առաջարկեց ներկայացնել կոնկրետ հիմնավորված առաջարկություններ:

Վ. Մարտիրոսյան - Առաջարկեց շատ խիստ չմոտենալ նախագծին: Օրենքի նախագծի մշակումը հարթ չի ընթացել: Եղել են տարակարծություններ, սակայն խումբը եկել է մեկ ընդհանուր տարբերակի: Օրենքի մշակումը պետական պատվեր է տրված Բնապահպանության նախարարության կողմից՝ բարելավելու ԲՀՊՏ-ների մասին ՀՀ օրենսդրությունը: Ողջունելի է, որ այս պետական գործընթացին մաս կազմի նաև հանրային կարծիքը: Դեռևս բաց է առաջարկությունների դաշտը և ցանկացողները կարող են իրենց առաջարկությունները ներկայացնել: Խնդրեց մասնակիցներին առաջարկությունները ներկայացնել էլեկտրոնային տարբերակով մինչև հաջորդ շաբաթվա սկիզբ:

Շնորհակալություն հայտնեց նախագծի վրա աշխատող խմբին, հանրային լսումները հյուրընկալող Էկոլոգիական իրավունքի կենտրոնին:

Կ. Ճենտերեճյան



Արձանագրությունը կազմեց՝

Գ. Նավասարդյան

ՔՆՆԱՐԿՄԱՆԸ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ՝

1. ՀՀ բնապահպանության նախարարություն.
2. <<Հայաստանի պահպանվող տարածքների համակարգի զարգացում>> ՄԱԶԾ/ԳԷՀ միջին ծավալի ծրագիր.
3. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության <<Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկ.
4. իրավագիտության ֆակուլտետի էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոն.
5. ՀՀ տարածքային կառավարման նախարարություն.
6. ԱԺ Գյուղատնտեսության և բնապահպանության հանձնաժողով.
7. Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ.
8. Հայաստանի էկոտուրիզմի ասոցիացիա.
9. Երիտասարդ կենսաբանների ասոցիացիա.
10. Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամ (FPWC).
11. Հարավային Կովկասի Անդրսահմանային համատեղ քարտուղարություն.
12. Երիտասարդ բնապահպան իրավաբանների և տնտեսագետների ասոցիացիա.
13. Ձկնաբանության և հիդրոէկոլոգիայի ինստիտուտ.
14. Գերմանական միջազգային համագործակցության ընկերություն, Կենսաբազմազանության կայուն կառավարում (GIZ SMB).
15. Կովկասի ռեգիոնալ էկոլոգիական կենտրոն.
16. Կովկասի բնության հիմնադրամ (CNF).
17. Լեռնագնացության ֆեդերացիա:

ԼՈՒՍԱՆՔԱՐՆԵՐ





